

**ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐԸ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԵՐԱՌՈՂ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ
 ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ**







ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ

Բաց Բաժնետիրական Ընկերություն


ՀՀ, ք. Երևան, Պուշկինի 19, հեռ. 54-78-95, ֆաքս 54-78-94, էլ. փոստ araratbank@araratbank.am
 Հաշվետվություն թիվ 138, 13.12.2016թ.

տեղաբաշխված արժեթղթերի դասը՝	բաժնետոմս,	պարտատոմս	պարտատոմս
արժեթղթերի քանակը՝	1,760,731 հատ,	40,000 հատ	280.000 հատ
արժեթղթերի անվանական արժեքը (արժույթը)՝	5,000 ՀՀ դրամ,	10,000 ՀՀ դրամ	25 ԱՄՆ դոլար

“Մենք՝ ստորագրող անձինք, հավաստիացնում ենք, որ հաշվետվությունում ներառվող տեղեկությունները ճշգրիտ և սրույգ են և չեն պարունակում բացթողումներ, որոնք կարող են խեղաթյուրել փաստաթղթի ամբողջականությունը”:

ստորագրող անձինք՝ Կարեն Հակոբյան	Վարչության անդամ, Իրավաբանական վարչության պետ		13.12.16
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Զարուհի Մելքոնյան	Վարչության անդամ, Միջազգային գործառնությունների վարչության պետ		13.12.16
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Սուրեն Կարապետյան	Վարչության անդամ, Կորպորատիվ գործառնությունների դեպարտամենտի պետ		13.12.16
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Տիգրան Գալստյան	Վարչության անդամ, Գլխավոր հաշվապահ		13.12.16
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Բագրատ Ճզմաչյան	Վարչության անդամ, Գործադիր տնօրենի տեղակալ		13.12.16
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Դավիթ Հարությունյան	Վարչության անդամ, Գործադիր տնօրենի տեղակալ		13.12.16
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

Ստորագրությունները հավաստում են՝

Աշոտ Օսիպյան	Վարչության նախագահ, Գործադիր տնօրեն		13.12.16
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)



13 դեկտեմբերի 2016թ.

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ և «Զարգացման Հայկական Բանկ» ԲԲԸ բաժնետերերի համատեղ ընդհանուր ժողով հրավիրելու մասին ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի 2016 թվականի դեկտեմբերի 11-ի թիվ 17/01Լ որոշում (ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի որոշումը կցվում է):

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ



Հասցե՝ 0010, ԳՂ, ք. Երևան, Պուշկինի 19 հեռ.՝ (+37410) 54-78-95 Ֆաքս՝ (+37410) 54-78-94 Էլ. փոստ՝ araratbank@araratbank.am

ք. Երևան

Կոդ: ՈՐԽ0102 – N 17/01L

Դաս: ՀՊ

«11» դեկտեմբերի 2016թ.

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ԵՎ «ԶԱՐԳԱՅՄԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԿ» ԲԲԸ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ՀԱՄԱՏԵՂ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի Հոդված 23-ի 1-ին մասը, «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի Հոդված 84-ի 1-ին մասի բ)-ից դ) կետերը, «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի Հոդված 21⁶-ի 1-ին մասի բ) կետը, ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ կանոնադրության 12.1. կետի բ) ենթակետը՝ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց Ց.

- 2016 թվականի դեկտեմբերի 27-ին ժամը 12⁰⁰-ին՝ ք.Երևան, Պուշկինի 19 հասցեում գտնվող ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ գլխամասային գրասենյակի 3-րդ հարկի դահլիճում հրավիրել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ և «ԶԱՐԳԱՅՄԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԿ» ԲԲԸ բաժնետերերի համատեղ ընդհանուր ժողով (այսուհետ՝ ժողով):
- Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ բաժնետերերի ցուցակը կազմելու օր սահմանել 2016 թվականի դեկտեմբերի 11-ը:
- Հաստատել ժողովի օրակարգը՝ համաձայն Հավելված 1-ի:
- Ժողով հրավիրելու մասին ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ բաժնետերերին ծանուցել պատվիրված նամակներ ուղարկելու միջոցով:
- Հաստատել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ բաժնետերերին տրամադրվող տեղեկությունների և նյութերի ցանկը՝ համաձայն Հավելված 2-ի:
- ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ բաժնետերերին տեղեկացնել, որ սույն որոշման 5-րդ կետով հաստատված ցանկում ընդգրկված նյութերին կարող են ծանոթանալ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ վարչական շենքում (ք.Երևան, Պուշկինի 19), ինչպես նաև համացանցի Բանկի տնային էջում (www.araratbank.am):
- Հաստատել օրակարգի հարցերի վերաբերյալ քվեաթերթիկների ձևը՝ համաձայն Հավելված 3-ի:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Խորհրդի նախագահ՝

Բարսեղ Բեգլարյան

Իսկականի հետ ճիշտ
Աշխատակազմի ղեկավար

Մ.Ուզունյան

